Այս մեր ինքդինքը համապատասխան է իտալերէն se stesso դերանունին։

Այս ալ ուղղական չունի, չի կրնար ունենալ.

Հայց.	se stesso	ինքզինք
Սեռ.	di se stesso	ինքզինքին
Տր.	a se stesso	ինքզինքին
Բաց.	da se stesso	ինքզինքէն

Հայերէն լեզուին մէջ անսովոր չէ բառի մը այս կամ այն հոլովին չգոյութիւնը. ո դերանունը գործիական չունի. իր դերանունը եզ. ուղղական, որով և հայկական չունի. սոյն, դոյն, նոյն խումբը՝ եզակի բացառական չունի. միմեանց, իրերաց անեզական դերանունները՝ ուղղական չունին, եւն։ Ահա ըսելիքս ըսի։ Լմնցաւ Արդէն ինչ ալ ըսենք դուն թէ ես՝ օգուտ չունի. ժողովուրդը իր գիտցածէն ետ չի կենար։ Հազար ըսէ։ Այսընեան խորթ է ըսեր, ինչ կ'արժէ։ Ա՞ռ է միայն խորթը. ինչ խորթ բաներ կան՝ որոնք գործածուելով՝ ազուորցեր են։ Սպանենցի կ'ըսենք, եւ խորթութիւն չենք զգար. տեսնեցի, իչնեցի, ելլեցի թող ըսէ մէկը, կրնայ ըսել՝ ոչ. որովհետեւ ժողովուրդը չէ ըսած։ Սպանանել, տեսանել, իչանել, ելլանել միւնոյն բայերն են. սպանի, տեսի, իչի, ելի։ ժողովուրդը «սպաննել»ին վատարեալը սպանենցի ըրեր է, միւսերն ալ՝ տեսայ, իչայ, ելայ. տեսնեցի, իչնեցի, ելլեցի որքան խորթ են, նոյնքան խորթ է եւ սպանենցի. բայց գործածութիւնը ողորկեր է խորթութիւնը։ Այսի հատ մը՝ իբրեւ նը մոյշ. կրնամ ճանկերով օրինակներ փռել։

Եւ այս՝ այսչափ։

Հ. Ա. ՂԱՋԻԿԵԱՆ

Ց. Գ. — «Բազմավէպ»ի յաջորդ թիւին մէջ պիտի գրենք «Զէրոյ» եւ «Ամէն» բառերու մասին, եւ ցուցնենք թէ բարբառակ ժողովուրդին մէջ է, ե՞ռով թէ ե՞ռով գրողներուն մէջ։

ՆՈՅՆ

ԵՐԿՈՒ ԼԱՐ

Ես խնդրեցի իմ մայրիկէս մի քընար
Որ իւր կուրծքին կըրէր սիրոյ երկու լար.
Նա արտասուեց լուռ խակումով մայրական
Եւ իմ մանուկ կուրծքիս դըրաւ մի քընար։

Ու սեղմելով զայն իմ անփորձ հէգ սրտիս
Ես պարզեցի բոլոր գաղտնիքն հոգիս.
Մանաւանդ տակ մին՝ թըրթռացաց բերկրական
Միւսը՝ տըխուր խոր հառաչեց երկրորդ ձայն։

Դաշնեցի ես լարերն երկու խելագար
Կարմիր վարդի շուքին նըստած սիրավառ,
Ջարկը սրտիս արձագանգեց ու գընաց
Բայց արիւնոտ վարդն էր մատիս թառամած։

Ցաւի քընարս ու կախեցի ուռիէն
Որ թոթովէ սիւքին զբաւրթ երգերէն.
Ես լըսեցի որ այդ ուռին ալ կու լար
Սիրով խաբուած որպէս մի կին վշտահար։

Ցայսժամ քընարն իմ փըշրեցի հազար մաս
Ես չեմ ուզեր ոչ սէր ոչ վիշտ աշխարհի.
Անկարեկիր կ'ուզեմ ըլլալ աստղ երկնի
Որ միշտ ժըպտիմ բախտիս իմ չար ու բարի։

***

digitised by A.R.A.R.@